ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2025թ. թիվ 610-Ա

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ. N 102 հրամանը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպություններում մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը անցկացնել 2025թ. տարեվերջյան գույքագրումներ:

2. Գույքագրման արդյունքների հավաստիության, ճիշտ և ժամանակին կատարման պատասխանատվությունը դնել կազմակերպությունների ղեկավարների վրա:

3. Գույքագրումների կատարման վերահսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի համապատասխան վարչությունների վրա:

4. Գույքագրման արդյունքները ներկայացնել մարզպետի աշխատակազմ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 15-ը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 15
ք.Վանաձոր